Հավելված N 2
ՀՀ կառավարության 2026 թվականի
հուլիսի 23-ի N 1072 - Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ Ս. ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ 20 ԵՎ 37/1 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Նվիրաբերողը	Արարատի մարզ, Արարատ համայնք, ի դեմս՝ համայնքի ղեկավարի
2. Նվիրառուն	«ՄԼ ՄԱՅԻՆԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (այսուհետ՝ ընկերություն)
3. Առարկան	1) Արարատի մարզի Արարատ համայնքի Արարատ քաղաքի Ս. Շահումյան փողոց 20 հասցեում 0.25608 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս (առկա է քանդման ենթակա 1231.3 քառ. մ մակերեսով ինքնակամ անավարտ շինություն), կադաստրային ծածկագիր՝ 03-002-0016-0092, սեփականության վկայական՝ 11112025-03-0065. 2) Արարատի մարզի Արարատ համայնքի Արարատ քաղաքի Ս. Շահումյան փողոց 37/1 հասցեում 0.10762 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս (առկա է քանդման ենթակա 451.11 քառ. մ մակերեսով ինքնակամ անավարտ շինություն), կադաստրային ծածկագիր՝ 03-002-0015-0147, սեփականության վկայական՝ 03112025-03-0057 (այսուհետ միասին՝ գույք):
4. Պայմանագրի կնքման ժամկետը	Ծրագրի իրականացման նպատակով համայնքը ընկերության հետ կնքում է գույքի նվիրաբերության պայմանագիր (նվիրաբերության վերաբերյալ որոշումն ընդունելուց հետո 1 (մեկ) ամսվա ընթացքում):
5. Սեփականության իրավունքի փոխանցումը	Ընկերության սեփականության իրավունքը գույքի նկատմամբ ծագում է նվիրաբերության պայմանագրերից ծագող իրավունքների պետական գրանցման պահից:
6. Պայմանագրի կնքման և պետական գրանցման ծախսերը	Նվիրաբերության պայմանագրի կնքման և դրանից բխող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը հոգում է ընկերությունը:
7.Կողմերի պարտավորությունները	1) նվիրաբերողը պարտավորվում է՝ ա. նվիրառուին տրամադրել երրորդ անձանց իրավունքներից և փաստացի տիրապետումից ազատ գույքը. 2) նվիրառուն պարտավորվում է՝ ա. ծրագիրն իրականացնել դրա մեկնարկից հետո 5 (տարվա) ընթացքում, բ. գույքն օգտագործել բացառապես ծրագրի իրականացման շրջանակներում, գ. գույքը, մինչև պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարումը, օտարել միայն

	նվիրաբերողի գրավոր համաձայնությամբ: Գույքը նոր գնորդին կարող է օտարվել միայն ընկերության հետ կնքված պայմանագրով ամրագրված պարտավորություն-ները նոր գնորդի կողմից ստանձնելու դեպքում, դ. ծրագրի մեկնարկից հետո 5 (հինգ) տարվա ընթացքում ծրագրի իրականացման համար նախատեսված հողատա-րածքներում՝ իրականացնել ինքնակամ անավարտ շինությունների քանդումը, կառուցել բազմաբնակարան բնակելի շենքերը, 48 բնակարաններ և 686 քառ. մ մակերեսով հասարակական տարածք սեփականության իրավունքով անհատույց փո-խանցել Արարատ համայնքին, ե. ծրագրի մեկնարկից հետո յուրաքանչյուր 6 (վեց) ամիսը մեկ համայնքին տեղեկություն ներկայացնել ծրագրի իրա-կանացման ընթացքի վերաբերյալ: Հաշվետվությունները սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում 60-օրյա (վաթսունօրյա) ժամկետում Արարատ համայնքի բյուջե վճարել տուգանք 1.000.000 (մեկ միլիոն) դրամ: Հաշվետվու-թյունները պետք է հավաստեն ընկերության կողմից ծրագրի իրականացման նպատակով արված ծախսերը և կատար-ված աշխատանքների ծավալները, զ. բացառել գույքի այնպիսի օտարումը, գրավադրումը, վար-ձակալության կամ օգտագործման տրամադրումը կամ այլ ձևով ծանրաբեռնումը, որը կխոչընդոտի 48 բնակարանների և 686 քառ. մ մակերեսով տարածքի՝ համայնքին սեփակա-նության իրավունքով փոխանցելուն:
8.Կողմերի պատասխանատվությունը	1) կողմերը, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, պատասխանատվություն են կրում պայմանագրի պայմանների խախտման համար. 2) այն պարագայում, երբ ծրագրի մեկնարկից հետո 5 (հինգ) տարվա ընթացքում ամբողջ ծավալով չի իրա-կանացնում ծրագիրը, ապա գույքը, դրանում արված անբաժանելի բարելավումներով հանդերձ, սեփականության իրավունքով և առանց փոխհատուցման անցնում է նվիրա-բերողին: Նվիրաբերողն իրավունք է ձեռք բերում լուծելու պայմանագիրը, որի արդյունքում կդադարեցվի վերջինիս սեփականության իրավունքը: Մինչև պայմանագրի լուծման պահը նվիրառուի կողմից կատարված ներդրումները չեն վերադարձվում. 3) պայմանագրի այլ պայմանների խախտման համար պա-տասխանատվությունը սահմանվում է պայմանագրով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

23.07.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ